Ադրբեջանը կարող է թիրախ դառնալ Իրանի համար

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 18.04.2024թ.

2024 թ. ապրիլի 13-ի լույս 14-ի գիշերը Իսրայելի տարածքի վրա Իրանի հրթիռային հարվածը օրակարգից հանեց իր գծած *«կարմիր գծերը»* չպահպանելու դեպքում Թեհրանի կողմից հակամարտություն սկսելու պատրաստակամության մասին սկզբունքային հարցը: Միևնույն ժամանակ, հարձակմամբ նշանավորվեց հակամարտության մուտքը որակապես նոր մակարդակ, ինչը չի բացառում ԻԻՀ-ի հարվածների հնարավորությունը Իսրայելի տարածաշրջանային դաշնակիցների և, առաջին հերթին, իրանական տարածքին մոտ գտնվողների վրա: Իսրայելը վաղուց է կիրառում այս մեթոդը՝ պարբերաբար հարվածներ հասցնելով Սիրիային, Լիբանանին և Իրաքում ու Եմենում իրանամետ կամակատարների (պրոքսի) տեղակայման դիրքերին: Մինչ այժմ Թեհրանը միակողմանիորեն ձեռնպահ էր մնում նմանատիպ քայլերից, սակայն ընդհանուր իրավիճակը փոխվում է դինամիկ կերպով, և, առճակատման պարույրի սեղմման դեպքում, Իրանի կողմից այս արգելքի շրջանցումը ավելի շատ ժամանակի հարց կլինի, քան թե՝ առիթի:

Խոսքը, մասնավորապես, Ադրբեջանի մասին է, որը տարածաշրջանային աշխարհաքաղաքական տախտակի վրա դիրքավորվում է՝ որպես Իսրայելի արբանյակ: Հաշվի առնելով վերջին 10-15 տարիների ընթացքում Բաքվի կողմից Թել Ավիվին մատուցված ծառայությունների լայն շրջանակը, Իրան–Իսրայել գլոբալ առճակատման համատեքստում «*ադրբեջանական խնդրի*» լուծումը տրամաբանորեն բխում է Թեհրանի ռազմավարական շահերից: Խոսքը Բաքվի կողմից Թել Ավիվին տրամադրված և որպես իրանական տարածքի վրա հարձակման պարագայում իբրև «ցատկահարթակներ» ծառայող, Իրանի օդային տարածքը տեսածրող իսրայելական հետախուզման ու ռադիոէլեկտրոնային հսկման կենտրոններ ընդունած ավիաբազաների չեզոքացման և ԱդրՀ-ում իսրայելական հատուկ ծառայությունների հետախուզական խմբավորումների տեղակայման կետերի ոչնչացման մասին է:

ԱդրՀ-ում Իսրայելի բազմամակարդակ ռազմական ներկայության մասին տվյալները հենց իրանական կողմն է ակտիվորեն տարածում, և հենց Թեհրանը՝ իր տեղեկատվական աղբյուրների միջոցով հետևողականորեն տարածում է խոսույթն այն մասին, որ այս հարավկովկասյան հանրապետությանը «*սիոնիստական ռեժիմը*» ինտենսիվորեն նախապատրաստում է ԻԻՀ-ին հարվածելու ռազմահենադաշտի և Իրանի հասարակության թյուրքալեզու հատվածում անջատողական տրամադրությունների ստեղծման օջախի դերակատարության համար՝ նպատակ ունենալով ապակայունացնել ներքաղաքական իրավիճակը Իսլամական Հանրապետությունում:

Հետևաբար, վերջին զարգացումների լույսի ներքո բազմիցս ավելանում է հավանականությունն այն բանի, որ Թեհրանը կկենտրոնանա Ադրբեջանի՝ որպես Իսրայելի հակաիրանական ռազմական ռազմավարությունը խաթարելու հիմնական ուղղություններից մեկի վրա: Եթե Իրանը, չնայած Արևմտյան կոալիցիայի ակնհայտ ճնշումներին և սպառնալիքներին, ապացուցել է հրեական պետության վրա ուղղակիորեն հարձակվելու իր կարողությունը, ապա դժվար թե Ադրբեջանին «*կարգի հրավիրելու*» հարցում ավելի հզոր մեկը կարողանա կապել իր ձեռքերը: Ավելին, ռազմական ռազմավարության տեսակետից, Ադրբեջանում իսրայելական ռազմա-հետախուզական ենթակառուցվածքին հիպոթետիկ զանգվածային հարված հասցնելը, օբյեկտիվ հանգամանքներից ելնելով, հղի է հրեական պետության համար շատ ավելի զգալի կորուստներով, քան Իրանի կատարած հարձակումներն անմիջապես իսրայելական տարածքների վրա:

Ասվածը չի ենթադրում, որ ԻԻՀ-Ն չի փորձի քաղաքական ու դիվանագիտական միջոցներով նվազագույնի հասցնել իրադարձությունների նման զարգացման հավանականությունը: Այնուամենայնիվ, եթե իրանա–իսրայելական առճակատման պարույրը շարունակի սեղմվել՝ ընդլայնելով դիմակայության առաջնագիծը, ապա Իրանը Ադրբեջանի վրա կարող է առնվազն հրթիռային հարձակման դիմել: Ընդ որում, ինչպես ի պատասխան ադրբեջանական ռազմահենադաշտից Իսրայելի կանխարգելիչ գործողությունների, այնպես էլ՝ իր կողմից կանխարգելիչ միջոցի տրամաբանությամբ: Ամեն ինչ կախված է Թեհրանի՝ սեփական գոյութենական անվտանգության սպառնալիքների գնահատականից, որի «X» աստիճանը կստիպի նրան այլևս հաշվի չառնել ո՛չ Արևմուտքին, ո՛չ Հարավային Կովկասը չկորցնելու ձգտող Մոսկվայի դերը, և ոչ էլ՝ Բաքվին հովանավորող Անկարային՝ Թել Ավիվի հետ միասին: